http://doi.org/10.53587/25792865-2024.11-61

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իսրայելյան Գ.Վ.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հոդվածում նշվում են վարչատարածքային միավորի քրեածին և զոհածին բնութագրերի վերաբերյալ տեսակետներ: Ընգծվում է, որ ինչպես քրեածին, այնպես էլ զոհածին իրավիճակները դրսևորվում են որոշակի տարածքում: Հիմնավորվում է այն գաղափարը, որ տարածքի առանձնահատկությունները նպաստում են հանցանքի կատարմանը, կամ պատասխանատվությունից խուսափելու համար, կամ ուղղակի հոգեբանական ազդեցություն են գործում քրեածին և զոհածին վարքի դրսևորման վրա: Այս առումով ակնհայտ է դառնում վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննության իրականացման անհրաժեշտությունը:

Հեղինակը ներկայացնում է վարչական միավորի քրեագիտական փորձաքննության ընդհանրացված բնութագիրը՝ ընդգծելով, որ այն էմպիրիկ հետազոտություն է, որի նպատակն է բացահայտել որոշակի տարածքում առկա կամ կանխատեսվող քրեածին և զոհածին գործոնները՝ դրանց նկատմամբ կանխարգելիչ ներգործություն ապահովելու համար:

Հոդվածում նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննություն չի իրականացվում, ինչը հետևանք է համապատասխան իրավական կարգավորումների բացակայության: Բացարձակապես ակնհայտ է, որ գործում են հանցավորության հատուկ կանխարգելում իրականացնող մարմինների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, որոնք պահանջում են կատարել վերլուծական աշխատանք: Հեղինակը հանգում է այն եզակացության, որ դա չի նույնանում փորձաքննության իրականացման հետ, և տվյալ խնդիրը պահաջում է հետագա հետազոտություններ համապատասխան իրավական կարգավորումների իրականացման նպատակով:

Գիտական հետազոտությունների վերլուծության հիման վրա հեղինակը գալիս է նաև այն եզրակացության, որ անհրաժեշտ է ընդունել ինչպես «Հանցագործությունների կանխարգելման մասին» օրենք, որով հնարավորություն կընձեռնվի իրականացնել

Թղթակցական հասցեն՝ Իսրայելյան Գևորգ Վովայի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, e-mail: g_i_1979@mail.ru

քրեաբանական փորձաքննության իրականացման ընդհանուր իրավական կարգավորումը, այնպես էլ «Քրեաբանական փորձաքննության մասին» օրենք, որը, թույլ կտա կանոնակարգել քրեաբանական փորձաքննության հասկացությունը, խնդիրները, կազմակերպման և անցկացման սկզբունքները, օբյեկտները, քրեաբանական փորձաքննության տեսակները, փորձաքննություններ նշանակող և անցկացնող մարմինների կարգավիճակը, փորձաքննության եզրակացությանը ներկայացվող պահանջները և այլ հարաբերություններ: Բացի այդ, հեղինակն առաջարկում է վերոհիշյալ օրենքների դրույթների մանրամասն կանոնակարգման նպատակով ընդունել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև ապահովել գործող ակտերի պատշաճ համապատասխանությունը հոդվածում առաջարկվող կանոնակարգերին:

Բանալի բառեր. *վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննություն, տարածք, քրեածին գործոն, զոհածին գործոն:*

Տարածքն ունի ինչպես քրեածին, այնպես էլ զոհածին կարևոր նշանակություն: Խնդիրն այն է, որ թե՛ առաջինը, թե՛ երկրորդը դրսևորվում են որոշակի տարածքում: Երբեմն տարածքի առանձնահատկությունները նպաստավոր են հանցանքի կատարման, երբեմն՝ պատասխանատվությունից խուսափելու համար, երբեմն էլ՝ ուղղակի հոգեբանական ազդեցություն են գործում քրեածին և զոհածին վարքի դրսևորման վրա: Այս առումով ակնհայտ է դառնում վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննության անհրաժեշտությունը:

Վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննությունը քրեաբանական փորձաքննության տեսակներից է, էմպիրիկ հետազոտություն է, որի նպատակն է բացահայտել որոշակի տարածքում առկա կամ կանխատեսվող քրեածին և զոհածին գործոնները՝ դրանց նկատմամբ կանխարգելիչ ներգործություն ապահովելու համար:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում փորձաքննության քննարկվող տեսակը, ըստ էության, չի իրականացվում, ինչը հետևանքն է համապատասխան իրավական կարգավորումների բացակայության: Նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում խնդրո առարկան գիտականորեն ուսումնասիրված չէ, պայմանավորում է սույն հետազոտության արդիականությունը և նորույթը:

Հետազոտության նպատակն է վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննության էության բացահայտումը և իրավական հիմքերի ստեղծման առաջարկությունների ներկայացումը:

Քրեաբանական փորձաքննությունը տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ երևույթների ու գործընթացների ուսումնասիրությանը, վերլուծությանը և գնահատմանն ուղղված միջոցառումների համալիրի իրականացումն է, որի նպատակն է որոշել դրանց հնարավոր ազդեցությունը հանցավորության, դրա պատճառական համալիրի,

քանակական-որակական բնութագրերի, հետևանքների և քրեաբանական նշանակություն ունեցող այլ ցուցանիշների նկատմամբ [1, էջ 147]:

Նշվածից ելնելով՝ «քրեաբանական փորձաքննություն» եզրույթի բառացի մեկնաբանությունը վկայում է այն մասին, որ դա պետք է իրականացվի որոշակի օբյեկտի՝ քրեաբանության ուսումնասիրության առարկայի հետ հարաբերակցության հարթությունում: «Քրեաբանական փորձաքննություն» հասկացությունը բավականին ընդգրկուն է, ինչը պայմանավորված է փորձաքննության այդ տեսակի օբյեկտների բազմազանությամբ: Մասնագիտական գրականության մեջ օբյեկտների թվին դասվում են՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, իրավասու սուբյեկտների կողմից հանցավորության կանխարգելման ուղղությամբ իրականացվող պրակտիկ գործունեությունը, քրեաբանական և զոհաբանական իրադրությունը կոնկրետ տարածքային միավորում և այլն [2, էջեր 14-17, 3, էջ 183]:

Նշվածից բխում է, որ վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննությունը (այսուհետ՝ Փորձաքննությունը) քրեաբանական փորձաքննության տարատեսակ է:

Փորձաքննությանը բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) փորձագիտական հետազոտություններն իրականացվում են քրեաբանական հետազոտության տրամաբանությամբ, որը բնութագրվում է որպես հանցավորության, դրա պատճառների ու պայմանների, հանցագործի և տուժողի անձի առանձնահատկությունների հետ կապված ընդհանուր օրինաչափությունների բացահայտման նպատակային գործունեություն՝ ուղղված որոշակի տարածքում հանցավորության դեմ պայքարի, մասնավորապես՝ կանխարգելման արդյունավետ միջոցներ մշակելուն,

2) հետազոտության նպատակը փորձաքննության օբյեկտի՝ վարչատարածքային միավորի (դրա մի մասի) բացասական քրեածին և զոհածին ազդեցության գնահատումն է և կանխարգելման առաջարկների ներկայացումը,

3) Փորձաքննությունն իրականացվում է քրեաբանական հետազոտությունների մեթոդներով (նվածի վերաբերյալ ստորև մանրամասն անդրադարձ է կատարվել),

4) Փորձաքննությունն իրականացվում է որոշակի սուբյեկտների՝ իրավապահ մարմինների կողմից (օրինակ՝ ոստիկանություն, ազգային անվտանգության և այլ մարմիններ՝ յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում),

5) Փորձագետի եզրակացությունը բովանդակում է հետազոտության օբյեկտին առնչվող քրեածին ու զոհածին գործոնների առկայության կամ բացակայության վերաբերյալ հիմնավորված եզրահանգումներ, այդ գործոնների կանխարգելման կոնկրետ առաջարկություններ [4]:

Ընդհանրացված ձևով Փորձաքննության կառուցակարգը ներառում է հետևյալ գործոնների վերլուծությունը.

1. Վաղօրոք ծագած դիտավորության իրագործման գործընթացի վրա ազդող գործոններ (օրինակ՝ լուսավորություն չունեցող հասարակական վայրն օգտագործվում է

թմրամիջոցների ապօրինի իրացման նպատակով գաղտնարաններ կազմակերպելու համար):

2. Կոնկրետ վայրում գտնվող անձանց վրա տարածքի հոգեբանական ազդեցության գործոններ, որոնք, որպես կանոն, բնորոշ են հանցանքի կատարման հանկարծակի ծագած դիտավորությանը (օրինակ՝ հանցավորը պատահական հայտնվում է համայնքի՝ ամայի տարածքում տեղակայված դպրոց հաճախելու ճանապարհին, որտեղ, տեսնելով ուսումնական պարապմունքներից միայնակ վերադարձող երեխային, նրա նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ է կատարել):

3. Պատասխանատվությունից խուսափելու համար նպաստավոր գործոններ, որոնք պայմանավորված են վարչատարածքային միավորի հատկություններով (օրինակ՝ տեղակայումը, քիչ բնակեցվածությունը, լքված արտադրական տարածքների առկայությունը և այլն), աննկատ տեղաշարժվելու հնարավորությամբ (օրինակ՝ տարածքում տեսանկարահանող սարքերի բացակայությունը և այլն):

4. Պաշտոնական կամ հասարակական վերահսկողության գործոնները (օրինակ՝ ոստիկանության տարածքային ստորաբաժանման բացակայությունը, վարչատարածքային միավորի բնակչության իրավագիտակցության, իրավական կուլտուրայի, իրազեկվածության, զգոնության մակարդակը և այլն) [5, էջ 15]:

Նշված գործոնների վերլուծությունը կատարվում է համալիր ձևով՝ համադրելով ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ հատուկ սոցիոլոգիական մեթոդները:

Ընդհանուր գիտական մեթոդներից են վիճակագրական և համեմատական մեթոդները: Վիճակագրական մեթոդները հնարավորություն են տալիս գնահատել և օգտագործել կոնկրետ տարածքում հանցավորության օրինաչափությունները: Համեմատական մեթոդը թույլ է տալիս համեմատել հանցավորության մասշտաբները, ինչի արդյունքում ստացված տվյալների հիման վրա կանխատեսվում է դրա իրական աճը կամ նվազումը: Հարկ է նշել, որ համեմատական մեթոդն ավելի արդյունավետ է վիճակագրական մեթոդի հետ միասին օգտագործելը: Դա հնարավորություն է տալիս ստանալ Փորձաքննության օբյեկտի մանրամասն պատկերը: Եթե որոշակի տարածքում առանց իրավապահ մարմինների հատուկ ջանքերի կտրուկ նվազում է հանցագործությունների քանակը, ապա դա վկայում է հանցագործությունների բնական լատենտայնության մակարդակի աճի մասին: Այս մեթոդի կիրառման դրսևորումների նաև քրեական վիճակագրության համեմատությունը վարչական իրավախախտումների վիճակագրության, բժշկական հաստատությունների տվյալների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, զանգվածային լրատվության միջոցների հաղորդումների, գործազրկության մակարդակի հետ: Եթե հնարավոր է լինում որոշակի տարածքում պարզել երկու երևույթների (օրինակ՝ գործազրկության աճի և գրանցված հանցագործությունների քանակի) միջև փոխադարձ կապը և գնահատել դրա մեծությունը, ապա մի երևույթի փոփոխություններով կարելի է դատել այդ երևույթի հետ կապված մեկ այլ երևույթի փոփոխությունների մասին [6, էջեր 11-12]:

Վերլուծություն իրականացնելու նպատակով հատուկ սոցիոլոգիական մեթոդներից կիրառելի են.

1. Հարցումը, այդ թվում՝ անկետավորումը և հարցազրույցը:

Անկետավորումը և հարցազրույցը հնարավորություն են տալիս պարզել օբյեկտի առանձնահատկություններն անմիջական այն զբաղեցնողների կողմից (բնակիչ, տարածքում աշխատող անձ և այլք):

Բավականին արդյունավետ է տարածքի բնակչության զոհացման դիտարկման մեթոդը, որի առավելություններից է հետազոտության անմիջական նպատակի ընտրության և դրա հիման վրա անկետայի կազմման հնարավորությունը: Մեթոդի էությունն այն է, որ մարդկանց որոշակի խմբի առաջարկվում է պատասխանել այն հարցին, թե իրենք կամ իրենց ընտանիքի անդամները կոնկրետ տարածքում վերջին մեկ (երեք, հինգ) տարում հանդիսացե՞լ են հանցագործության տուժող: Սակայն այս մեթոդի արդյունքները գնահատելիս անպայման պետք է նկատի ունենալ, որ չի կարելի դրանք ուղղակիորեն համադրել վիճակագրության տվյալների հետ, քանի որ անկետավորման միջոցով տվյալ դեպքում պարզվում է տուժողների քանակը, իսկ քրեական վիճակագրության հիմնական տվյալները վերաբերում են հանցագործությունների և հանցագործների քանակին: Մեկ հանցագործությունից կարող են տուժած լինել մի քանի անձինք:

2. Փաստաթղթերի վերլուծությունը:

Հանցավորության գնահատման տեսանկյունից հետաքրքիր և բավականին օբյեկտիվ մեթոդ է իրավապահ մարմինների, ինչպես նաև այլ մարմինների պաշտոնական փաստաթղթերի վերլուծությունը: Այսպես, Առողջապահության նախարարության հաշվետվություններում առկա են տեղեկություններ ֆիզիկական անձանց ստացած վնասվածքների վերաբերյալ, որոնք հաճախ կարող են լինել նրանց հանդեպ կատարված հանցավոր ոտնձգությունների արդյունք:

3. Փորձագիտական գնահատականների մեթոդը

Փորձագիտական գնահատականն օբյեկտի քրեաբանական գնահատման ամենապարզ ու ոչ բավարար օբյեկտիվ մեթոդներից է: Մի կողմից, օբյեկտի լրիվ և բազմակողմանի հետազոտության համար անհրաժեշտ է հենվել մասնագետի (մասնագետների) տեսական և գործնական փորձի և գիտելիքների վրա: Մյուս կողմից, այս մեթոդը հաճախ հիմնվում է ներըմբռնման վրա և կրում է սուբյեկտիվ բնույթ: Այդ պատճառով տվյալ մեթոդը կիրառելիս հիմնական ուշադրությունը պետք է սևեռել փորձագիտական գնահատականների արժանահավատությանը: Այս տեսանկյունից նախընտրելի է օգտագործել կոլեկտիվ փորձագիտական գնահատականները:

4. Զանգվածային լրատվության միջոցների նյութերի կոնտենտ վերլուծությունը:

Զանգվածային լրատվության միջոցների նյութերի կոնտենտ վերլուծությունը տեքստերի և տեքստային զանգվածների քանակական ուսումնասիրությունն է: Օրինակ՝ նման եղանակով բացահայտվել է երեխաների շրջանում որպես քաղցրավենիք ներկայացվող թմրամիջոցների քողարկված տարածման դեպքերի մասին

տեղեկատվությունը: Այսպես, նշվում է, որ երեխաներին փողոցում մոտենում են տարբեր անձինք և առաջարկում բալի, ելակի համով կոնֆետներ, որոնք պարունակում են տարբեր թմրամիջոցներ [7, էջ 119, 8, էջեր 70-73]:

Օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում Փորձաքննություն չի իրականացվում, ինչը հետևանք է համապատասխան իրավական կարգավորումների բացակայության:

Իհարկե, գործում են հանցավորության հատուկ կանխարգելման սուբյեկտների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, որոնք պահանջում են կատարել վերլուծական աշխատանք: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունն այդ մարմնի գործառույթների թվին է դասում հանցավորության շարժընթացի, հասարակական անվտանգության ապահովման վիճակի համակողմանի վերլուծության իրականացումը (…) [9, կետ 11, ենթակետ 6]: Սակայն նշված գործառույթի իրագործումը չի նույնանում Փորձաքննության հետ, քանզի վիճակագրությունը եղելության վերաբերյալ տեղեկատվություն է՝ ձևավորված վերլուծական մեթոդի կիրառման արդյունքում, իսկ Փորձաքննությունը որոշակի տարածքում առկա և կանխատեսվող քրեածին և զոհածին գործոնների՝ տարբեր մեթոդներով իրականացվող էմպիրիկ հետազոտություն է, ինչի հիման վրա կազմակերպվելու է նպատակաուղղված կանխարգելիչ ներգործություն: Ուստի զգացվում է համապատասխան իրավական կարգավորումների անհրաժեշտություն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է.

1. Ընդունել «Հանցագործությունների կանխարգելման մասին» օրենք

Հանցագործությունների կանխարգելման, քրեաբանական փորձաքննության իրականացման ընդհանուր իրավական կարգավորման համար, կարծում ենք, հարկավոր է ընդունել «Հանցագործությունների կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի նախագծի մշակումն, ի դեպ, որպես միջոցառում, նախատեսված է դեռևս «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1039-Ն որոշմամբ [10, հավելված 1, կետ 10]:

2. Ընդունել «Քրեաբանական փորձաքննության մասին» օրենք:

Նշված օրենքը պետք է կանոնակարգի քրեաբանական փորձաքննության հասկացությունը, խնդիրները, կազմակերպման և անցկացման սկզբունքները, օբյեկտները, քրեաբանական փորձաքննության տեսակները, փորձաքննություններ նշանակող և անցկացնող մարմինների կարգավիճակը, փորձաքննության եզրակացությանը ներկայացվող պահանջները և այլ հարաբերություններ:

3. Իրականացնել ենթաօրենսդրական կարգավորումներ:

Վերոհիշյալ օրենքների դրույթների մանրամասն կանոնակարգման համար անհրաժեշտ է ընդունել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր (օրինակ՝

Փորձաքննության անցկացման մեթոդաբանության վերաբերյալ), գործող ակտերի դրույթները համապատասխանեցնել նոր կարգավորումներին (օրինակ՝ ՆԳՆ կանոնադրության մեջ կատարել համահունչ լրացումներ) և այլն:

Կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրահանգումները.

1. Վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննությունը քրեաբանական փորձաքննության տեսակներից է: Այն ընդհանուր գիտական և հատուկ սոցիոլոգիական մեթոդներով իրականացվող էմպիրիկ հետազոտություն է, որի նպատակն է բացահայտել որոշակի տարածքում առկա կամ կանխատեսվող քրեածին և զոհածին գործոնները՝ դրանց նկատմամբ կանխարգելիչ ներգործություն ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային միավորի քրեաբանական փորձաքննություն չի իրականացվում, ինչը հետևանք է համապատասխան իրավական կարգավորումների բացակայության: Իհարկե, գործում են հանցավորության հատուկ կանխարգելման սուբյեկտների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր, որոնք պահանջում են կատարել վերլուծական աշխատանք: Սակայն դա չի նույնանում Փորձաքննության հետ: Ուստի զգացվում է համապատասխան իրավական կարգավորումների անհրաժեշտություն:

3. Առկա իրավիճակը շտկելու համար առաջարկվում է ընդունել «Հանցագործությունների կանխարգելման մասին» օրենք, որով կիրականացվի քրեաբանական փորձաքննության կազմակերպման ընդհանուր իրավական կարգավորումը, ինչպես նաև ընդունել «Քրեաբանական փորձաքննության մասին» օրենք, որը, հեղինակի կարծիքով, պետք է կանոնակարգի քրեաբանական փորձաքննության հասկացությունը, խնդիրները, կազմակերպման և անցկացման սկզբունքները, օբյեկտները, քրեաբանական փորձաքննության տեսակները, փորձաքննություններ նշանակող և անցկացնող մարմինների կարգավիճակը, փորձաքննության եզրակացությանը ներկայացվող պահանջները և այլ հարաբերություններ: Բացի այդ, վերոհիշյալ օրենքների դրույթների մանրամասն կանոնակարգման համար առաջարկվում է ընդունել համապատասխան ենթաօրենսդրական ակտեր (օրինակ՝ փորձաքննության անցկացման մեթոդաբանության վերաբերյալ), գործող ակտերի դրույթները համապատասխանեցնել նոր կարգավորումներին (օրինակ՝ ՆԳՆ կանոնադրության մեջ կատարել համահունչ լրացումներ):

Գրականության ցանկ

1. Жишко К.С. Криминологическая экспертиза в Республике Беларусь как необходимая мера в системе предупреждения преступности // Территория науки. 2017. № 5, С.146-153.

2. Իսրայելյան Գ., Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության իրավական հիմքերի վերլուծությունը և կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն / Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ., 2024. – 56 էջ:
3. Шевчук Н.Н. Криминологическая экспертиза как мера предупреждения правонарушений // Вестник Полоцкого государственного университета. Экономические и юридические науки. 2019. № 6. С. 181-188.
4. Осипова Е.С. Понятие и сущность криминологической экспертизы нормативно-правовых актов // https://sun.tsu.ru/mminfo/000063105/312/image/312-113.pdf (վերջին մուտք՝ 19.01.2024).
5. Радостева Ю.В. Криминологическая экспертиза территории в системе мер противодействия преступности // Вестник Краснодарского университета МВД России. 2021, № 1 (51). С. 12-16.
6. Իսրայելյան Գ., Քրեական զոհաբանություն (Բնութագիրը և բաղադրիչները): Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ., 2023. – 116 էջ:
7. Իսրայելյան Գ., Թմրահանցավորության դեմ պայքարի նյութահիրավական և քրեաբանական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան: Եր.: Հեղ. հրատ., 2023. – 220 էջ:
8. Իսրայելյան Գ., Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան. – Եր.: Հեղ. հրատ, Աստղիկ Գրատուն, 2020. - 192 էջ:
9. «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի N 270-Լ որոշում: Ընդունվել է 14.03.2023թ.: Հրապարակվել է 14.03.2023թ.:
10. «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1039-Ն որոշում: Ընդունվել է 27.03.2008թ.: ՀՀՊՏ 2008. 10.01/60(650): Հոդ.1022:

ХАРАКТЕРИСТИКА КРИМИНОЛИГИЧЕСКОЙ ЭКПЕРТИЗЫ АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЕДИНИЦЫ И НЕОБХОДИМОСТЬ ЕЕ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Исраелян Г.В.

В статье излагаются взгляды на криминогенную и виктимогенную характеристики административно-территориальной единицы. Отмечается, что как криминогенная, так и виктимогенная ситуации проявляются на определенной

местности. Обосновывается мысль о том, что специфика местности способствует совершению преступления или уклонению от ответственности, или оказывает прямое психологическое воздействие на проявление преступного и виктимного поведения. В связи с этим очевидна необходимость проведения криминологической экспертизы административно-территориальной единицы.

Автор дает обобщенную характеристику криминологической экспертизы административной единицы, подчеркивая, что это эмпирическое исследование, целью которого является выявление существующих или прогнозируемых криминогенных и виктимологических факторов в определенной области с целью обеспечения превентивных мер.

В статье отмечено, что в Республике Армения криминологическая экспертиза административно-территориальной единицы не проводится, что является следствием отсутствия соответствующего правового регулирования. Безусловно, действуют правовые акты, регулирующие деятельность субъектов специального превентирования преступлений, однако они требуют производства дополнительной аналитической работы. Автор приходит к выводу, что это не идентично проведению экспертизы и данная проблема требует дальнейших исследований.

На основании анализа научных изысканий, автор также приходит к выводу о необходимости принятия, как закона «О превентировании преступлений», который позволит осуществить общее правовое регулирование криминологической экспертизы, так и закона «О криминологической экспертизе», который, позволит обеспечить регулирование понятий, задач, принципов, объектов, видов криминологической экспертизы, правового положения органов, проводящих указанную экспертизу, требования к формированию заключения экспертизы и другие отношения. Данный подход автором дополняется также предложением о принятии соответствующих подзаконных актов для детального регулирования положений упомянутых выше законов и обеспечения должного соответствия действующих актов с предлагаемыми в статье регламентациями.

Ключевые слова: *криминологическая экспертиза административно-территориальной единицы, территория, криминогенный фактор, виктимогенный фактор.*

CHARACTERISTICS OF CRIMINOLOGICAL EXPERTISE OF THE ADMINISTRATIVE-TERRITORIAL UNIT AND THE NEED FOR ITS LEGAL REGULATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Israyelyan G.V.

The article outlines views on the criminogenic and victimogenic characteristics of an administrative-territorial unit. It is noted that both criminogenic and victimogenic situations manifest themselves in a certain area. It is justified that the specifics of the area contribute to the commission of a crime, or evasion of responsibility, as well as have a direct psychological effect on the manifestation of criminal and victim behavior. Therefore, the need for a criminological expertise of the administrative-territorial unit is obvious.

The author gives a generalized description of criminological expertise of an administrative unit, noting that it is an empirical research, the purpose of which is to identify existing or predicted criminogenic and victimological factors in a certain area in order to provide preventive measures against them.

The article presents that in the Republic of Armenia, criminological expertise of the administrative territorial unit is not conducted, which is a consequence of the lack of appropriate legal regulation. It is obvious, that there are legal acts regulating the activities of subjects of special crime prevention, which require analytical work. The author comes to the conclusion, that this is not identical to conducting of expertise. Therefore, it is necessary to implement appropriate legal regulation.

Based on the conducted research, the author comes to a conclusion that there is a need to adopt the law "On the prevention of crimes", which will implement the general legal regulation of criminological expertise, as well as to adopt the law "On criminological expertise", which, according to the author's opinion, should regulate the concept, tasks, principles, objects, types of criminological expertise, the legal status of bodies conducting the expertise, requirements for the formation of an expert opinion and other relations. In addition, the author proposes to adopt appropriate by-laws for the detailed regulation of the provisions of these laws, to ensure compliance of existing acts with the proposed regulations.

Keywords: *criminological expertise of the administrative-territorial unit, territory, criminogenic factor, victimogenic factor.*

Ներկայացվել է խմբագրության 22.01.2024
Ընդունվել է տպագրութան 18.03.2024